

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

**3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ /ՖԵՐՄԵՐԱՅԻՆ/ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ՖԵՐՄԵՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

(ազգանուն, անուն)

« » 200 թ.

Ուսումնական հաստատության անվանումը

ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«ՖԵՐՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻՎԱԿԱՆ /ՖԵՐՄԵՐԱՅԻՆ/ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ **Նախնական մասնագիտական /արհեստագործական/**

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ **Ֆերմեր**
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ **միջնակարգ /լրիվ/ ընդհանուր**
ՈՒՄՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ **1 տարի**
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԵՎԸ՝ **առկա**

I. ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Table with columns for months (հունվ., փետրվ., մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս) and rows for subjects (e.g., 1, 2, 3, 4) and total hours (Ընդամենը).



Տեսական ուսուցում



Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմանը



Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման



Նախաավարտական, արտադրական պրակտիկա



Մոդուլների ամփոփում



Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման



Ամփոփիչ պետական ատեստավորում



Արձակուրդ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Առեստավորում ըստ կիսամյակների			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների									
		Քննութ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			I կուրս		II կուրս		III կուրս		
					Ընդամենը	Այդ թվում		1	2	3	4	5	6	
						Տեսակ. ուսուցում	Լաբոր. գործն.	Սեմինար					18 շաբաթ	19 շաբաթ
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏՅԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ													
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5,6տ		72	54	18						36	36
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6		18	14		4						18
1.3	Իրավունքի հիմունքներ		6		36	26	6	4						36
1.4	Պատմություն		6		36	28		8						36
1.5	Օտար լեզու		5տ		60	42	18						60	0
1.6	Ֆիզիկական կուլտուրա		5տ		74		74						36	38
	ԸՆԴԱՄԵՆԸ				296	164	116	16					132	164
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		6		36	30	6							36
2.2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		6		18	18								18
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	48	6							54
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
3.1	Հաղորդակցություն		5		51	30	21						51	
3.2	Անվտանգություն և առաջին օգնություն		6		36	20	16						36	
	ԸՆԴԱՄԵՆԸ				87	50	37						87	
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
4.1	Երկրագործության հիմունքներ	5			68	34	34						68	
4.2	Հողի հիմնական և նախազանքային մշակում		5		34	18	16						34	
4.3	Գյուղատնտեսական կենդանիների տեսակները և նրանց մթերատվությունը		5		34	17	17						34	
4.4	Գյուղատնտեսական կենդանիների կերակրման և խնամքի գործընթացները		5		51	26	25						51	
4.5	Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը		5տ		51	34	17						51	
4.6	Տնտեսագիտության հիմունքներ		5		34	20	14						34	
	ԸՆԴԱՄԵՆԸ				272	149	123						272	
5.	ՀՎՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
5.1	Բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիա	6			72	36	36							72
5.2	Մելիորատիվ աշխատանքներ և ոռոգում		6տ		54	18	36							54
5.3	Տնտեսության գյուղ. արտադրանքի քանակական և տնտեսական բնութագրումը և իրացումը	5			68	30	38						68	
5.4	Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում և	6			72	36	36							72

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:
Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող էլնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, էլնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
Հաստատությունը, էլնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՖՏԿ 3-08-001
ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	51 ժամ
Տեսական ուսուցում՝	30 ժամ
Գործնական պարապմունքներ՝	21 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝ 2կան
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները.
2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.
3. նախածեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.
4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. կատարի փաստաթղթավորում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝(պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը)
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
- դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.
- գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ռեսուրսներն առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,
- բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ռեսուրսներն տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՖՏԿ 3-08-002

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը մշակվել է արտադրական ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության բոլոր մակարդակների աշխատողներին:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական գիտելիքներ պետք չեն:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում,
3. հստակ ներկայացնի արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները:
- բ. կարողանում է լրացնել ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը:
- գ. հստակ պատկերացնում է աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը:
- դ. ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը:
- զ. ճիշտ է շարադրում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Կեսական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի մոդելներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Կարողանում է շարադրել տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- բ. կարողանում է ներկայացնել էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, մասնավորապես՝ հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը
- գ. կարողանում է շարադրել ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Սովորողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 Հստակ ներկայացնի արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները:
- բ. Ճիշտ շարադրում է արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները:
- գ. Ճիշտ ներկայացնում է արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները:
- դ. Ճիշտ շարադրում է արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.

ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝ (ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, փոշու առկայությունը)

բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝ (օդափոխություն, ջեռուցում, ջրամատակարարում, ջրահեռացում և այլն)

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Կեսական պարապմունք և գործնական աշխատանք: Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4 Կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. կարողանում է ճիշտ կատարել արհեստական շնչառություն,
- բ. կարողանում է ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,
- գ. կարողանում է դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,
- դ. կարողանում է վիրակապել կոտրվածքները ,
- ե. կատարում է առաջին օգնություն այրվածքների դեպքում,
- զ. ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դասախոսություն և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ՖՏԿ 3-08-003

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության «Ֆերմեր, գյուղատնտես» որակավորմամբ արհեստավորի պատրաստման համար: Սողուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հողի կազմի և հատկությունների, հողի մշակման համակարգերի, պարարտանյութերի տեսակների, ցանքաշրջանառությունների, երկրագործության հիմնական համակարգերի մասին և ձևավորել գյուղատնտեսական մշակաբույսերը ճանաչելու, հողի մեխանիկական կազմը որոշելու, ցանքսի և պարարտացման նորմերը հաշվարկելու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական ուսուցում՝ 34 ժամ

Գործնական աշխատանք՝ 34 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Չկան

ՈՒՍՈՒՄՆԱՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. կարողանա շարադրել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և որոշել նրա մեխանիկական կազմը,
2. կարողանա շարադրել գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանները և երկրագործության մեջ նրանց կանոնավորման մեթոդները,
3. կարողանա դասակարգել մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները,
4. կարողանա շարադրել հողի մեխանիկական մշակման հիմնական գործընթացները,
5. կարողանա ներկայացնել և ընտրել տվյալ գյուղատնտեսական գոտու ցանքաշրջանառությունները և երկրագործության համակարգերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. կարողանա շարադրել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և որոշել նրա մեխանիկական կազմը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

ա. Կարողանում է որոշել հողի կազմը,

բ. ճիշտ է շարադրում հողի հատկությունները,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ հողի կազմի և հատկությունների վերաբերվող գիտելիքների ստուգման նպատակով: Սովորողին կտրվի հողանմուշ և կպահանջվի որոշել դրա մեխանիկական կազմը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հողի հատկությունների մասին և հողի մեխանիկական կազմը որոշելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տաբեր հողատեսակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, սարքեր, գործիքներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. կարողանա շարադրել գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանները և երկրագործության մեջ նրանց կանոնավորման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

ա. ճիշտ է նկարագրում գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանները

բ. կարողանում է ճիշտ շարադրել երկրագործության մեջ նրանց կանոնավորման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանների և երկրագործության մեջ նրանց կանոնավորման մեթոդների վերաբերվող գիտելիքների ստուգման նպատակով: Սովորողը պետք է հստակ շարադրի մշակաբույսի կանոնավոր աճի համար անհրաժեշտ պայմանները և այդ պայմանների բարելավման ուղիները: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

բարձրացում: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ: **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հողի տվյալ գյուղատնտեսական գոտու ցանքաշրջանառությունների և երկրագործության համակարգերի մասին:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տվյալ գյուղատնտեսական գոտու ցանքաշրջանառությունների և երկրագործության համակարգերի վերաբերյալ դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ՝ Տեսական պարապմունք՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՖՏԿ 3-08-004

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության «Ֆերմեր-գյուղատնտես» որակավորումով արհեստավորի պատրաստման համար: Սողուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել վարի և նախացանքային ագրեգատների միջոցով հողի հիմնական և նախացանքային մշակում կատարելու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Տեսական ուսուցում՝ 18 ժամ
Գործնական աշխատանք՝ 16 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ սովորողը պետք է ուսումնասիրի ՖՏԿ 3-08-003 մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել հողի հիմնական և նախացանքային մշակության գործընթացները,
2. կարողանա շարադրել հողի հիմնական և նախացանքային մշակություն կատարող տեխնիկական միջոցներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները,
3. կատարի հողի հիմնական և նախացանքային մշակում վարի և նախացանքային ագրեգատների միջոցով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. կարողանում է ներկայացնել հողի հիմնական և նախացանքային մշակության գործընթացները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում հողի հիմնական մշակության գործընթացները,

բ. ճիշտ է ներկայացնում հողի մակերեսային մշակության գործընթացները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ հողի հիմնական և նախացանքային մշակման գործընթացների վերաբերյալ: Սովորողը պետք է հստակ շարադրի գործընթացները, նրանց կատարման հաջորդականությունը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա:

Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հողի հիմնական և նախացանքային մշակության վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝ Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. կարողանա շարադրել հողի հիմնական և նախացանքային մշակություն կատարող տեխնիկական միջոցներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է շարադրում հողի մշակության խորության շեղումներին ներկայացվող պահանջները,

բ. ճիշտ է շարադրում հողի փխրությանը ներկայացվող պահանջները,

գ. ճիշտ է շարադրում ոռոգման ակուններին ներկայացվող պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ հողի հիմնական և նախացանքային մշակման որակական ցուցանիշների (հողի փխրության, մշակման խորության, առի շրջման, մոլախոտերի թաղման և այլն), տեխնիկական միջոցներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջների վերաբերյալ գիտելիքներ ստուգելու նպատակով:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ: **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հողի հիմնական և նախացանքային մշակման որակական ցուցանիշների, տեխնիկական միջոցներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջների վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել հողի հիմնական և նախացանքային մշակում վարի և նախացանքային ագրեգատների միջոցով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ճիշտ է շարադրում հողի հիմնական և նախացանքային մշակման ագրոտեխնիկական պահանջները,

ա. ճիշտ է նախապատրաստում ագրեգատը աշխատանքի համար,

բ. ճիշտ է նախապատրաստում դաշտը և կատարում աշխատանքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ հողի հիմնական և նախացանքային մշակումը կատարելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ ձևավորել հողի հիմնական և նախացանքային մշակում կատարելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտոր, գյուղատնտեսական մեքենաներ, դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ

ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՖՏԿ 3-08-005

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության՝ «Ֆերմեր, գյուղատնտես» որակավորումամբ արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ապագա մասնագետներին ուսուցանել գիտելիքներ գյուղատնտեսական կենդանիների տեսակների, նրանց ծագման, տնայնացման, բուժման մեթոդների և մթերատվության բարձրացման վերաբերյալ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական պարապմունք՝ 17 ժամ

Գործնական աշխատանք՝ 17 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Չկան

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. կարողանա շարադրել խոշոր եղջերավոր կենդանիների ցեղային և մթերատվության հատկանիշները:
2. կարողանա շարադրել մանր եղջերավոր կենդանիների ցեղային և մթերատվության հատկանիշները:
3. կարողանա շարադրել խոզերի ցեղային հատկանիշները և մթերատվության առանձնահատկությունները:
4. կարողանա դասկարգել թռչունների տեսակները, ցեղերը և մթերատվության ապահովման պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՔ 1. կարողանա շարադրել խոշոր եղջերավոր կենդանիների ցեղային և մթերատվության հատկանիշները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԸ՝

- ա. ճիշտ է շարադրում խոշոր եղջերավոր կենդանիների ցեղային հատկանիշները,
- բ. ճիշտ է շարադրում խոշոր եղջերավոր կենդանիների մթերատվության հատկանիշները:
- գ. Ելնելով տեղի բնակլիմայական պայմաններից կարողանում է ճիշտ ընտրել համապատասխան ցեղը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվեն առաջադրանքներ խոշոր եղջերավոր անասունների ցեղերի և նրանց մթերատվության ցուցանիշների վերաբերյալ, նրանց գիտելիքները ստուգելու նպատակով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ որպեսզի հասկանա տավարից ստացվող մթերքների արտադրության տեխնոլոգիան: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի նկարներ, պլակատներ, դիդակտիկ նյութեր և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	5 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 2. կարողանա շարադրել մանր եղջերավոր կենդանիների ցեղային և մթերատվության հատկանիշները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԸ՝

- ա. ճիշտ է շարադրում մանր եղջերավոր կենդանիների ցեղային հատկանիշները,
- բ. ճիշտ է շարադրում մանր եղջերավոր կենդանիների մթերատվության հատկանիշները:
- գ. Ելնելով տեղի բնակլիմայական պայմաններից կարողանում է ճիշտ ընտրել համապատասխան ցեղը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն առաջադրանքներ հանրապետության տարբեր տարածաշրջաններում բուծվող մանր եղջերավոր կենդանիների ցեղային հատկանիշների, մթերատվության ցուցանիշների, համապատասխան ցեղերի ընտրության և պահվածքի մեթոդների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հանրապետության տարբեր տարածաշրջաններում բուծվող մանր եղջերավոր կենդանիների ցեղային հատկանիշների, մթերատվության ցուցանիշների, համապատասխան ցեղերի ընտրության և պահվածքի մեթոդների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի նկարներ, պլակատներ, դիդակտիկ նյութեր և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 3. կարողանա շարադրել խոզերի ցեղային հատկանիշները և մթերատվության առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԸ՝

- ա. ճիշտ է շարադրում խոզերի ցեղային հատկանիշները,
- բ. ճիշտ է շարադրում խոզերի մթերատվության հատկանիշները:
- գ. Ելնելով տեղի բնակլիմայական պայմաններից կարողանում է ճիշտ ընտրել համապատասխան ցեղը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվեն առաջադրանքներ խոզերի ցեղերի, նրանց էքստերերի, կաթնատվության որոշման և խոճկորների աճի ու զարգացման վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ որպեսզի հասկանա խոզերից ստացվող մթերքների արտադրության տեխնոլոգիան: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի նկարներ, պլակատներ, դիդակտիկ նյութեր և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 4 ժամ
Գործնական աշխատանք` 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. կարողանա դասկարգել թռչունների տեսակները, ցեղերը և մթերատվության ապահովման պահանջները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

- ա. ճիշտ է դասակարգում թռչունների տեսակները և ցեղերը,
- բ. ճիշտ է շարադրում թռչունների մթերատվության ապահովման պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողը կստանա առաջադրանքներ թռչունների ցեղերի, նրանց մթերատվության ցուցանիշների և պահվածքի ձևերի վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ թռչունների ցեղերի, նրանց մթերատվության ցուցանիշների և պահվածքի ձևերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի նկարներ, պլակատներ, դիդակտիկ նյութեր և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 3 ժամ
Գործնական պարապմունք` 3 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄ ԵՎ ԽՆԱՍՔ

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ֆՏԿ 3-08-006

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» մասնագիտության «Ֆերմեր-գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար:

Այս մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ գյուղատնտեսական կենդանիների կերակրման, առանձին սեռահասակային խմբերի համար կազմվող լիառժեք կերաբաժինների, կերամիավորի, բիոպրեպարատների, խնամքի, զոոհիգիենիկ հիմնական սկզբունքների վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

Տեսական պարապմունք` 26 ժամ
Գործնական աշխատանք` 25 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել`

- ֆՏԿ 3-08-001 «Հաղորդակցություն»
- ֆՏԿ 308-002 «Անվտանգություն և առաջին բուժօգնություն»

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա`

1. Տավարի կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները,
2. Մանր եղջերավոր կենդանիների կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները,
3. Խոզերի կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները,
4. Թռչունների կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի կատարողականը գնահատվելու է սահմանված արդյունքների կատարման բոլոր չափանիշների հիման վրա, ապահովելով բավարար նակարդակը:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. կարողանա շարադրել տավարի կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

- ա. ճիշտ սահմանում է կերամիավորը
- բ. կարողանում է կազմակերպել մսուրային և արոտային շրջաններում կենդանիների ջրումը
- գ. ճիշտ է շարադրում լիառժեք կերաբաժին նպատակը և նրա կազմումը տարբեր սեռահասակային խմբերի համար
- դ. ճիշտ է շարադրում անասնաշենքի զոոհիգիենիկ առաջնային պահանջները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ձեռք բերված կարողությունների գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանի միջոցով: Սովորողին կտրվեն մի շարք հարցեր` կերամիավորի հասկացության, մսուրային և արոտային պահվածքի ժամանակ կերաբաժինների լիառժեքության, արտադրող ցուլերի, կովերի, հորթերի կերաբաժիններ, զոոհիգիենիկ պայմանների վերաբերյալ: Պատասխանները պետք է հիմնավորվեն ճիշտ, հիմնավորման շարադրումը լինի մասնագիտորեն համոզիչ և գրագետ ձևակերպված:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների, գործնական աշխատանքների և ուսումնական գրականության միջոցով` նպատակ ունենալով սովորողին տալ այնպիսի գիտելիքներ,

որպեսզի լիովին յուրացնի և կիրառի այդ՝ տավարի կերակրման և խնամքի ժամանակ: Ուսուցման ժամանակ կկիրառվեն պլակատներ, դիտակտիկ նյութեր:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. կարողանա շարադրել մանր եղջերավոր կենդանիների կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- ա. ճիշտ է սահմանում կերամիավորը,
- բ. կարողանում է կազմակերպել մսուրային և արոտային շրջաններում կենդանիների ջրումը,
- գ. ճիշտ է շարադրում լիարժեք կերաբաժնի նպատակը և նրա կազմումը տարբեր սեռահասակային խմբերի համար,
- դ. ճիշտ է շարադրում անասնաշենքի գոոհիգիենիկ առաջնային պահանջները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ձեռք բերված կարողությունների գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանի միջոցով: Սովորողին կտրվեն մի շարք հարցեր՝ կերամիավորի հասկացության, մսուրային և արոտային պահվածքի ժամանակ կերաբաժինների լիարժեքության, արտադրող խոյերի, մայրերի, գառների կերաբաժինների, գոոհիգիենիկ պայմանների վերաբերյալ: Պատասխանները պետք է հիմնավորվեն ճիշտ, հիմնավորման շարադրումը լինի մասնագիտորեն համոզիչ և գրագետ ձևակերպված:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների, գործնական աշխատանքների և ուսումնական գրականության միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ այնպիսի գիտելիքներ, որպեսզի լիովին յուրացնի և կիրառի այդ՝ մանր եղջերավոր կենդանիների կերակրման և խնամքի ժամանակ: Ուսուցման ժամանակ կկիրառվեն պլակատներ, դիտակտիկ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 8 ժամ
Գործնական աշխատանք՝ 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 . կարողանա շարադրել խոզերի կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- ա. ճիշտ է սահմանում կերամիավորը,
- բ. կարողանում է կազմակերպել մսուրային և արոտային շրջաններում կենդանիների ջրումը,
- գ. ճիշտ է շարադրում լիարժեք կերաբաժնի նպատակը և նրա կազմումը տարբեր սեռահասակային խմբերի համար,
- դ. ճիշտ է շարադրում անասնաշենքի գոոհիգիենիկ առաջնային պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ձեռք բերված կարողությունների գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանի միջոցով: Սովորողին կտրվեն մի շարք հարցեր՝ կերամիավորի հասկացության, մսուրային և արոտային պահվածքի ժամանակ կերաբաժինների լիարժեքության, արտադրող վարազների, մերունների, խոճկորների կերաբաժինների, գոոհիգիենիկ պայմանների վերաբերյալ: Պատասխանները պետք է հիմնավորվեն ճիշտ, հիմնավորման շարադրումը լինի մասնագիտորեն համոզիչ և գրագետ ձևակերպված:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների, գործնական աշխատանքների և ուսումնական գրականության միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ այնպիսի գիտելիքներ, որպեսզի լիովին յուրացնի և կիրառի այդ՝ խոզերի կերակրման և խնամքի ժամանակ: Ուսուցման ժամանակ կկիրառվեն պլակատներ, դիտակտիկ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. կարողանա շարադրել թռչունների կերակրման և խնամքի հիմնական սկզբունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- ա. ճիշտ է սահմանում կերամիավորը
- բ. ճիշտ է շարադրում լիարժեք կերաբաժնի նպատակը և նրա կազմումը թռչունների առանձին տեսակների համար
- գ. ճիշտ է շարադրում մսատու /բրոյլեր/ և ածան հավերի կերակրման առանձնահատկությունները
- դ. ճիշտ է շարադրում անասնաշենքի գոոհիգիենիկ առաջնային պահանջները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ձեռք բերված կարողությունների գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանի միջոցով: Սովորողին կտրվեն մի շարք հարցեր՝ կերամիավորի հասկացության, մսուրային և արոտային պահվածքի ժամանակ կերաբաժինների լիարժեքության, ածան, բրոյլեր հավերի, ճտերի կերաբաժինների, գոոհիգիենիկ պայմանների վերաբերյալ: Պատասխանները պետք է հիմնավորվեն ճիշտ, հիմնավորման շարադրումը լինի մասնագիտորեն համոզիչ և գրագետ ձևակերպված:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների, գործնական աշխատանքների և ուսումնական գրականության միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ այնպիսի գիտելիքներ, որպեսզի լիովին յուրացնի և կիրառի այդ՝ թռչունների կերակրման և խնամքի ժամանակ: Ուսուցման ժամանակ կկիրառվեն պլակատներ, դիտակտիկ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	8 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԱԿՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ **ՖՏԿ 3-08-007**

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության՝ «Ֆերմեր, գյուղատնտես» որակավորումամբ արհեստավորի պատրաստման համար: Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է կարողանա որոշել տվյալ հողի միավոր մակերեսին անհրաժեշտ պարարտանյութերի քանակը տվյալ մշակաբույսերի համար, գիտենա պարարտանյութերը հող մտցնելու եղանակները, կարողանա հաշվարկել և համատեղ կիրառել օրգանական, հանքային և բակտերիալ պարարտանյութեր: Կարողանա տարբերել և դասակարգել պարարտանյութերը ըստ սննդանյութերի պարունակության և ազդեցության բնույթի:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական պարապմունք՝	34 ժամ
Գործնական աշխատանք՝	17 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՋԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել **ՖՏԿ 3-08-004** մոդուլը:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. կարողանա շարադրել պարարտանյութերը հող մտցնելու ձևերը և եղանակները,
2. կարողանա բնութագրել օրգանական պարարտանյութերը,
3. կարողանա բնութագրել հանքային պարարտանյութերը,
4. կարողանա բնութագրել բակտերիալ պարարտանյութերը,
5. կարողանա ներկայացնել պարարտացման համակարգը խոտադաշտային

ցանքաշրջանառությունում,

6. կարողանա որոշել օրգանական և անօրգանական պարարտանյութերի անհրաժեշտ քանակը տվյալ մշակաբույսերի համար:

ԳՆԱՂՅՍՄԱՆ ԿԱՐԳԸՍողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է շարադրել պարարտանյութերը հող մտցնելու ձևերը և եղանակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- ա. կարողանում է դասակարգել պարարտանյութերը,
- բ. ճիշտ է շարադրում պարարտանյութերը հողը մտցնելու ձևերը,
